ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2012թ. թիվ 141-Ա

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N 919-Ն որոշման 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 31.07.2012թ. թիվ 8/17/2664-12 գրությամբ տրված համաձայնությունը, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Մեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կատարումն ապահովելու նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) Գառնիի ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Լոռու մարզի բնակավայրերում երկրաշարժի ուժգնության աղյուսակը՝ ըստ msk-64 սանդղակի՝ համաձայն N 2 հավելվածի.
3) ուժեղ երկրաշարժի հետևանքով մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 3 հավելվածի.
4) ուժեղ երկրաշարժի հետևանքով հնարավոր սանիտարական կորուստների հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի.
5) ուժեղ երկրաշարժի հետևանքով ստեղծված հրդեհային իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 5 հավելվածի.
6) ուժեղ երկրաշարժի հետևանքով ստեղծված ինժեներական իրավիճակի աղյուսակը՝ համաձայն N 6 հավելվածի.
7) ուժեղ երկրաշարժից Լոռու մարզի համայնքների համար պահանջվող փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական

աշխատանքների ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Վանաձոր քաղաքի շենք-շինությունների սեյսմիկ ռիսկի գնահատումը՝ համաձայն N 8 հավելվածի.
9) ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման՝ համաձայն N 9 հավելվածի.
10) ՀՀ Լոռու մարզի ղեկավար կազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 10 հավելվածի.
11) ՀՀ Լոռու մարզի կապի կազմակերպման սխեման՝ համաձայն N 11 հավելվածի.
12) ՀՀ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի ազդարարման սխեման՝ համաձայն N 12 հավելվածի.
13) ԼՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների անձնակազմի ազդարարման սխեման՝ համաձայն N 13 հավելվածի.
14) հետախուզության կառավարման սխեման՝ համաձայն N 14 հավելվածի.
15) Լոռու մարզի ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների մասին ըստ գերատեսչական պատկանելության տվյալները՝ համաձայն N 15 հավելվածի.
16) Լոռու մարզում անօթևան մնացած բնակչության տարահանման և կացարաններով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 16 հավելվածի.
17) Սպիտակի երկրաշարժի դեպքում անօթևան մնացած բնակչություն տեղաբաշխումը ըստ տարահանման վայրերի և տարահանման երթուղիների՝ համաձայն N 17 հավելվածի.
18) Լոռու մարզում տարահանվողների ընդունման կետերի հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն N 18 հավելվածի.
19) ՀՀ Լոռու մարզում երկրաշարժի հետևանքների վերացման պլան–ժամանակացույցը՝ համաձայն N 19 հավելվածի.
20) Լոռու մարզի կազմավորումների փրկարարական և վթարա-վերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկը՝ համաձայն N 20 հավելվածի.
21) ՀՀ Լոռու մարզում առկա ինժեներական տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների ըստ համայնքների հաշվարկը՝ համաձայն N 21 հավելվածի.
22) բժշկական ապահովման ուժերի հաշվարկը՝ համաձայն N 22 հավելվածի.
23) տուժած բնակչության և փրկարարական ուժերի՝ սննդով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 23 հավելվածի.
24) տուժած բնակչության՝ հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 24 հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. օգոստոսի 7
ք.Վանաձոր